

աղայն առողջ և անասան կենօր ընդ երկայն ա-
ւուրս ի պարծանս Հայոց ի շինութիւն և ի զարդ
Հայաստանայց սուրբ Եկեղեցւոյ Ազաւենք Թիւ-
ղերաց Փրկիչը որ իւր անչափ ողորմութեանը
համեմատ լուսաւորէ Լազարեանց տոհմի բոլոր
ննջեցեաց հոգիքը իւր արքայութեանը ուսնթա-
ռամ պսակին արժանացնէ նրանց, որոնք Ազգին
և Եկեղեցւոյն այնքան անհամեմատ բարերարու-
թիւններ անելոց յիտ ննջեցին կենդանի անու-
նով դերեղմանի մէջ, ամէն:

Սարգիս-Ա-Էփէ՛ Ս. Փննալէանց:

Ի 10^ն Հոկտեմբերի 1871 թ.

Ի Բագն-

ԱՀԱԿԵՐՏ-Գ ԴՊՐՈՑԻՆ ՆՈՐԳԱՅ:

Խոհագիր-Լեւոն Արարատ Աստուծոյ:

Թեպէտ մեր մոգքրիկ աշխատասիրութիւնները
արդէն չունին այն վսեմութիւնը և արժանա-
ւորութիւնը, ինչպէս որ, պահանջումէ «Արարա-
տայ», իմաստալիր էջերը, բաց այնու ամենայնիւ,
որպէս երեկայրիք մեր սրտի զգացմանցը, իբրև
թօթովանք մանկական նրբանուէր շրթանց, մե-
ծայցոյ ենք, որ կրնգունի խմբագրութիւնդ հրա-
տարակելու:

Անըջալէս, սորա հետ ուղարկելով խմբագրու-
թեանդ՝ երկք առանձնակի Ոտանաւորներ, մեր
զրաւոր աշխատութեան առաջին պտուղները, որոց
համար խնդրում ենք խոնարհարար, տեղիք շնոր-
հել պատուական «Արարտայ», էջերի մէջ:

Աշխատի Դարձնի Նորդ:

Յարո-Լեւոն Եղիանց

Աղետաւոր Տէր Սարգիսեանց

Ա-Էփէ՛ Տէր Ա-Էփէանց

Ի 25^ն Հոկտ. 1871 թ.

Ի Բաղն-Աստուծոյ Նորդ:

(Յարմար առիթներով ըստ ներկոյ միջոցաց
ամսագրոյս կ'հրատարակուին 2եր աշխատասիրած
ոտանաւորքը:)

ԵՐԿՈՒ՝ ԲԵՐՅ. ԶԳԱՅՄՈՒՆՔՆԵՐ:

Աշտարակեցւոյ միոյ երկու դստերք Օրի-
որդքն Համասիլու և Յլորենցիայ հետեւ-
եալ երկու գրութիւնները յղելով ի Նոր-
Պայազիտէ յանուն Խմբագրութեանս՝
թախանձանօք խնդրած են հրատարակել.
զորս թողումք ընծայել ի լոյս ի խրախոյս
նոյն օրիորդաց և այլոց:

Խոհագիր-Լեւոն Արարատ Աստուծոյ:

Երկար ժամանակ երկնածիր ուսման ճառագայ-
թաւէտ ծագումը մատակցապատ մութ ամպերու
տակ զետեղուած կննար, թէև հազիւ կծագէր
քանի մի անձանց սրտերու մէջ ուսման եռանդը.
սակայն ողջ Հայաստանի լայնատարած սահմա-
նին մէջ շատ սակաւ որոց մօտց խաւար քօղը
հալածուած կտեսնուէր: Այսպէս շատ տարիների
գատարկ շրջանները իրարու ետեւ միմեկորտ եր-
կիրներու մէջ գալով անցնելով անցուցին շատի-
րի մատղահաս ախտոսկի կեանքը թողնելով մի-
անգամայն անմասն ուսման պտղի քաղցր ճաշա-
կից:

Ո՛հ բարենախանձ օր՝ որու մէջ յանկարծ ա-
նակնկալ լուսոյ ճառագայթը թափանձուեց, տղի-
տութեան սեւթոյր ամպիւրը հալածելով՝ կար-
ծես նոր արշալոյս ծագեց Հայկաստանդ մանկանց
և օրիորդաց վերայ, որանցէն հիմա ամեն մի ան-
ձը առանց մի արդելքի կարողանում է յստաջ
խաղալ ուսման ճաշակը առնելու: Եւ ես Հայ-
կաստանդ զաւակներից մէկը Հայաստանի մի խորշ
անկիւնէն դուրս բարձրացրած դարձնած համար-
եալ խոր քնից՝ (որոյ տղիտութեան մատախուղին
մէջ իմ առաջինքը ցարդ կխաբխախէին) նոր
բացուած արշալուսոյ զովացուցիչ ցօղը՝ այն է
ուսման քաղցրիկ ճաշակը արդարեւ վայելում եմ
իմ օրիորդական դեռախիթիմ հասակին մէջ, և
օրէ ցօր ոտ առ ոտ ուսման լուսալիր ասպարիզի
մէջը մանկելով հասնում եմ բարկոյս նպատակ-
ներիս, բացվում են առաջ աղատութեան ընդ-
արձակ տեսարաններ. թուում է ինձ որ ուսման

պտղոց ակորժեկի քաղցրութիւնը զարմնաց-
նել է տալի ամեն մի մարդոյ իւր սպիտութեան
քնիցը՝ ընծայելով նրան իւր լուսացայտ ճառա-
գայլը:

Այն Բաջարթուն Վեհափառ Ազգայնոր՝ որոյ
մի ձեռին Ազգասիրութեան և միւս ձեռին Ու-
սումնասիրութեան բարեացատիժ գաւազաններն
են շողջողում Ազգին խրախոյս տալու Նա է՝ ո-
րից իմ օրիորդական հասակին մէջ գոհունակու-
թեանս նշան՝ բացվում է ահա մանկական շըր-
թուկըս զոհնելու զայն Վեհը. ինչպէս որ երբեմն
Երրայեցեց նորածաղիկ մանկունքը Ուսաննա եր-
գելով կօրհնէին Կենսագործ Յիսուսին, այնպէս և
ես իմ համագգ հարազատ եղբայրներուս և քոյ-
րերուս հետ միաբերան կօրհնեմ՝ Նորին Ուսում-
նակաթ Վեհ Հոգին. կրարեմաղթեմք Աստուծոյ
մարդասիրութենէն որ ինչպէս Նա մեզ մեր ման-
կական մատաղատի օրերուն մէջ մեր ձեռքը բռն-
նելով մեր սիրտը կուրախացնէ ուսման լուսաւոր
ասպարիզի մէջ մտցնելով, այնպէս ևս իւր կենաց
անիւր միշտ փառաւոր և ուրախալի օրերու մէջ
հոլովէ:

Նաև այս օրհնութեան ձայնին հետ մեր ար-
ժանի որդիքս մեր խղճալի Մայր Հայաստանին ա-
ւետիս կարգանք ասելով,

Հայաստան զարթիւր ողբալի քնից,

Թող քեզ բաւական լինին այդ թախիծ:

Ահա բացուեց քեզ Նոր շրջան փառաց,

Նոր լոյս Նոր արև գիղեցիկ կենաց:

Մխիթարութիւն տամք քո սգանաց:

Հազիր ուրախացած դու զգեստ փառաց:

Աւերուդ հոսանքն թող անհետանան,

Քաղցրիկ ժպիտներ ի քեզ էրևան:

Սուրբ ուսման քաղցրիկ ակորժ կաթիլներ

Լինին մխիթար սրբեն քոյդ աշիւ:

Փառաշքեղ դուք դամբանք մեր նախնեաց

Հայկայ Արամայ քաջալանջ արանց

Ի՞նչու այսուհետ չալիտի ցնծայք:

Որ մեր Հայ սերունդքս այսպէս ուրախ կանք:

Իրանալ թագ փառաց գեղեցիկ ուսման

Մեր ճակտին փայլի արփիանման:

Ռամիկք տգէտք ուսման հետեին

Շնորհիւ Վեհափառ Գէորգ Զորորդին:

Հասանդէմք՝ Տէր Խաչատրեանց

Ի 21-Ն Հոկտեմբերի 1871 -մ

Ի Բ. Նոր - Պայազէ:

Խաչատրեան - Նիկոն Արարայ Ահապէր:

Նրեք տարի յառաջ՝ երբ սկիզբն էր շարունա-
կութեան վայելչագորութիւնով պարապելուս՝ բա-
րեկիշատակ ուսուցիչն իմ՝ տնտրակիս առաջին
երկու տողերումն զրեց մի օրինակ այսպէս. «Ու-
սումն մանկութեան քանզի ի քարի. ուսումն
ծերութեան՝ զրի ի պաղի, և Այս երկու տող բա-
նի վրայ բարակ քննութիւն անելուց յետոյ, յան-
կարծ այլ իմն ներգործելի զօրութիւն թափան-
ձեց սրտիս մէջն, մինչ անգամ առանց ժամա-
վաճառ լինելու հարկ զրի վրաս, որպէս զի ման-
կութեանս շրջանումն կատարած լինիմ ինձ տո-
ւած օրինակին միտքն. նոյն օրիցն սկսած առանց
որոշելոյ զիշերը ցերեկից, անդադար աշխատանաց
ճիգն ինձ ճակատադիր սեպհականելով՝ այդ փոքր
ի շատէ կտեսնեմ՝ առաջիս մանկութիւն ուսման
հանդէսը ու Նոր լայն ու արձակ ասպարէզը, որի
քաղցրահամ ճաշակիցն յազել չեմ՝ կարող. այս
անկողնապետի զանձն զետեղելով բանական արկ-
ղիս մէջն՝ երջանիկ կհամարիմ ինձ ժամանակին
հետ բաշխել և կարօտ մնացած համասեռ ընկեր-
ներիս, որով կյուսամ բարեաց պատճառ և բա-
րեսնունդ զաւակաց մայր անուանիլ. թող զրիչս
շարունակի իւր սրտեռանդ ուսման փափաղը
յայտնելու Հայ օրիորդացն ու Հայկազարմ մանկ-
տի տղայոցն, որպէս զի այնպիսիքն ծերութեան
ժամանակին չմնան կարօտ մանկութեան ուսման
ճաշակին. ի՞նչպէս կարեմ՝ խոստովանել այնպիսին
մարդ՝ երբ ուսման դուռն նորա առջևն կերևի
փակ. թէև կտեսնեմք արտաքուստ մարդանման
ասուն խօսուն, կամ կարեմ՝ անուանել այնպիս-
ւոյն սերունդ Հայկայ, երբ բալանին կապած ունի
գօտու տտիցն, բայց անգամ մի չմտաբերիր բա-
նալ զդուռն գէթ տեսնելու թէ ի՞նչ է նրանում.
բանիս համանմաններ զեռ շատերը կան, բայց
ընչո՞ւ պէտք է լինեն երբ զարդարուած աստուա-
ծատուր մտքով կարողանուին իւրեանց անձի
պիտոյքն որոնել, բարին ու չարը ճանաչել լաւն
ու վատն իմանալ, ապա ուրեմն ընչո՞ւ պէտք է
ուշիզարձնեն և գիտութեան ու տգիտութեան
վրայ, որբիցն միայն ունել ճանաչել ամեն բա-
նը՝ արդէն իսկ յայտնի է՝ որ մարդ միմիայն զի-

տութեան ձեռքովն կարող է բարոյքել իւր կեցութեան ընթացքը ու հանգստութիւնով վայելել Աստուծոյ բարիքները. ո՞վ չի խոստովանւիլ որ Հայր ներկայ դարուն պէս ազատ միջոցներ չ'ի ունեցել, որ զոնեայ՝ եկեղեցական պաշտօնն աւարդել կատարել կարողանայր, և ուղղափառ օրէնքը յայտնի մէկ մէկու հաղորդել. ու ուրեմն մինչդեռ շնորհիւ լուսաբաշխ մերստուրը Հայրապետիս լուսակարօտ մանկունքս կտեսնենք լուսոյ նշոյլը, թող ջննայ ամեն մէկը մասն ունեւալ նոյն նշուլիցը, ու հերքի իրանից հին աւուրց հետէ արմատացած տգիտութեան խաւարն. վերջ բանիս գրիչս կ'ինզրէ իմ դեռահաս ընկերներին՝ ունենալ բարենախանձ ջանք, որպէս զի քննութեան տակ ձգելով ուսման յարգը, կ'ընել կարողանան նրանից քաղցր ու համեղ բարի պտուղներ, էնպէս որ ծերութեան ժամանակին անաշխատ վայելել հանդիսանան:

Օրէնք Գլխանցիւ Տէր Խաչատրեանց

է 21 Հէպտեմբերի 1871 -ի

է Բ. Նոբեյ-յ-էր.

ԸՆԹԵՐՑԱԼՈՒՆ ՀԱՅՈՑ

ԱՂԷՔԱՆԴՐԱՊՈԼՈՑ

Օր քստ օրէ մարդկային մտաւոր և հոգեւոր յատկութեանց զարգացման համար զանազան միջոցներ ի գործ կ'դրուին, զանազան յառաջարկութիւններ, մտքեր և համոզմունք ի հանդէս կ'ելնին այդ սրբազան նպատակի վերաբերութեամբ. ամենայն մի թող մարդոյ ականջին արձագանք կ'կրկնէ համաձայն նորա բնական ձգտման՝ յառաջ, յառաջ դէպ ի առողջ միտք, դէպ ի հաստատ գաղափար, միով բանիւ դէպ ի կատարեալ և արժանաւոր կոչումն մարդկութեան. — Թէ և ամենայն մի ժողովրդոյ և ամենայն մի անհատի համար չէ կարելի մի օրինակ սահման ընտրել նորա հասկացողութիւնը զարգացնելու նկատմամբ, որովհետեւ բնութիւնը որոշ որոշ ազդեցութիւն կ'գործէ ֆիզիքական աշխարհի մէջ, սակայն եթէ ամենայն մի ուսումնական հայեցումով, ամենայն

մի ուսումնական միտք և գործ միակերպ կ'ընդունին դէպ ի բարոյական և մտաւորական լուսաւորութեան կէտը, ապա և կարելի է, եթէ ոչ ընդհանուր — գոնէ մասնաւոր կերպիւ օրինակով նորանցով. Մտաւոր սահմանը այնքան զարմանալի կերպով ստեղծագործուած է Արարչից, որ նորա զարգացման համար քանի դարերէ ի վեր որքան հանճարաւոր օրէնքներ, որքան կանոններ և որքան բարձր գաղափարներ ծնած են փիլիսոփայօրէն, և եթէ է կեանքի շարունակութիւն, փոխադրութիւն անցելոյն ի ներկայ, և ներկային յապառնի, պիտի կատարելագործուին այդ հանճարները. սակայն և դարձեալ պիտի տկարանան հոգեկան և բնական յատկութիւնն նոցա բարձր սահմանովն ամփոփել մի ենթարկութեան ներքոյ կատարելապէս զարգացնելու հայեցմամբ. Լուսաւոր և բարեկիրթ ազգաց մէջ ժողովրդոց ամենայն մի դասի համար անխտիր զարգացման իրրւ մի գրւխաւոր միջոց ընդունուած են ընթերցարաններն. որոց բազմադիմի օգուտներն աներկբայ բարիք կրպատրաստեն մարդկանց: Ուսումնարանը մասնաւոր կերպիւ հասկացողութիւն միայն կ'ընծայէ մարդոյ մի որ և իցէ առարկայի վերայ, բայց մի և նոյն ժամանակ միջոց չունի ուսումնարանը փորձական և գործնական տեղեկութիւն տալու նորան, կենաց մէջը կը վճռուի այն: Մի ծաղիկը միայն՝ որքան և գեղեցիկ լինի, չէ կարող գարուն մակարերել, կեանքէ առնուած մի հանճարեղ առած է այս. մի մարդոյ հանճարը որքան և զօրաւոր լինի առանձնապէս գործելու, և այն դէպ ի ուղիղը միշտ, ոյժ չունի, ընդհանուր մարդկութիւն մի խորհրդաւոր կերպիւ կապակցութիւն ունի իւր մէջ անխղիչ շղթայիւ ամրացած: Ընթերցարանը զանազան կարծիքներ, զանազան փորձեր յերևան կրերէ, մարդոյ ուշադրութիւնը կը գրաւուի այն տեղ, գործունէութիւնը յառաջ տանելու զրդումներ կ'ընանի, օգտաւէտ և բարի օրինակներ կը տպաւորէ իւր գաղափարի մէջ, կ'այնչանայ նորա հասկացողութեան շրջանակը, և վերջապէս ժողովոյ մէջ քարոզելով իւր բնական ձգտումները և մի որ և իցէ կարծիքը, կերպ կերպ կամ հակասաց և կամ համապատասխան կարծիքներ կ'սէ, որոնք և բաղդատուելով միմիանց հետ մի